

ամսագրում ներկայացված են Մայր Աթոռի և հայ հոգևորականության վերաբերող անհրաժեշտ լուրերը:

Բայց 51 տարի հետո, 1919 թ., Մայր Աթոռն ստիպված եղավ դադարեցնել մեծ պահանջարկ ունեցող ամսագրի հրատարակումը, մի բան, որ մեծ ցավ պատճառեց ամբողջ հայությանը, հատկապես հայ հոգևորությանը: Այդ եղավ ակամա, նյութական պակասից ավելի Առաջին համաշխարհային պատերազմի գործած չարիքները, 1915 թ. Կ. Պոլսի հայ մտավորականության աննախատեսելի կոտորածը, ապա ներքին գավառներում նախօրոք ծրագրավորված Մեծ եղեռնը, տուն-տեղ թողած ստիպողական գաղթականությունը:

Լավ չէր նաև Արևելյան Հայաստանի բնակչության վիճակը: Պատերազմի հետևանքով տակն ու վրա եղավ նաև հայ ժողովրդի խաղաղ կյանքն ու քաղաքական վիճակը: Մեկ կողմից արևմուտքից հարյուր հազարավոր գաղթականության ժամանումը դեպի արևելք, հաստատվելով Հայաստանում, Վրաստանում և Սև ծովի ափերի բնակավայրերում, ցարական Ռուսաստանի իշխանության քայքայումը, ռուսական զորքերի պարտադրված դուրս բերումը Արևելյան Հայաստանի մի շարք գավառներից՝ Կարսից, Էրզրումից, Սուրմալուից և մեծ կորուստներով ու զոհերով ամբողջ բնակչության արտագաղթը դեպի այսօրվա Հայաստանի սահմանները, սովալյուկ հայության վատագույն վիճակը, գաղթականության և տեղի բնիկ ժողովրդի սննդի պակասն ու տարափոխիկ հիվանդությունները և, վերջապես, պատերազմի պատճառած վատ հետևանքները, ցնցոտի կրող գաղթականների ողորմելի վիճակը, օրական հարյուրավոր ազգայինների մահացության դեպքերը Էջմիածնում, Երևանում և այլ վայրերում, հազարավոր մանկահասակների և ծնողազուրկ երեխաների աննախանձելի վիճակը, Մայր Աթոռի անշքացումը, սովի և աղքատության ճիրաններում մնացած հայության բեկորներն ի նկատի առնելով, Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց վշտալի Կաթողիկոսն ակամա ստիպված եղավ 1919-ին դադարեցնել «Արարատ» ամսագրի հրատարակումը՝ Վաղարշապատում՝ հակառակ Հայաստանի առաջին հանրապետության 1918 թ. անկախության հռչակմանը:

Հետագա տարիների քաղաքական և տնտեսական վրճակը հայտնի է բոլորին: Ծիշտ է, որ Արևելյան Հայաստանում այլևս խաղաղություն տիրեց, ժողովրդի խլյակներն սկսեցին շունչ քաշել, խոր վերքերը բուժել, բայց քաղաքական բռնությունները, Լենինականի 1926 թվականի հոկտեմբերի 22-ի մեծ երկրաշարժը, վերևից պարտադրված նոր աքսորներն ու ավերները հետևանք եղան, որ դանդաղ ընթանա հայության մնացած բեկորների վերականգնումը:

Ահա մեր ժողովրդի այս աննախանձելի վիճակը և Մայր Աթոռի աղքատացումը, շարժական արժեքների և անշարժ կալվածների բռնագրավումը և միաբանության անհիտումը պատճառ դարձան, որ շուրջ քառորդ դար (1919—1943 թթ.) Ս. Էջմիածինը մնա առանց պաշտոնաթերթի: Այս անգամ էլ Երկրորդ համաշխարհային պատերազմը (1939—1945 թթ.) պատճառ եղավ, որ արգելք հանդիսանա Մայրավանքի մի նոր օրգանի հրատարակմանը:

«Էջմիածին» ամսագրի սկզբնական շրջանում (1944—55 թթ.) լույս տեսան Մայր Աթոռի մի շարք միաբանների՝ Կարապետ արքեպս. Թումանյանի, Վահան արքեպս. Կոստանյանի և Ռուբեն արքեպս. Դրամբյանի, ինչպես նաև ակադեմիկոսներ Հրաչյա Աճառյանի, Ստեփան Մալխասյանցի և Հա-

միաներով ուշանում են, որով տեղ են հասնում շատ անկանոն կերպով և կամ ուղղակի կորչում ճանապարհին:

* * *

Այսօր «Էջմիածին» ամսագրի հրատարակման 50-րդ տարեդարձն է նշվում (1944—1994 թթ.): Այն ապրեց վայրէջքի և վերելքի տարիներ: Բայց այն հրատարակվում է անապառ կերպով, սակայն երբեմն 2—3 ամիս միացյալ համարներով: 1944—1961 թթ. ամսագիրն հրատարակվել է Երևանում, պետական տպարանում, իսկ այնուհետև Էջմիածնում, Մայր Աթոռի սեփական տպարանում, որի վերաբացումը կատարվեց 1961 թ. հոկտեմբերի 15-ին: Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի բացառիկ անխոնջ ջանքերի շնորհիվ կրկին սկսեց գործել վանքի սեփական տպարանը, որ հանդիսացավ ամերիկահայության նվերը Մայր Աթոռին: Դրամական հանգանակության հսկողության և ղեկավարման դժվարին գործն իր վրա վերցրեց Մայր Աթոռի բարերար և շքանշանակիր Երվանդ Աղաջանյանը, որ իր անձնական գործը գրեթե թողած, ամիսներով ամեն օր այցելելով Միացյալ Նահանգների հայաբնակ քաղաքները, հրավիրեց ժողովներ, հանգանակեց գումարներ՝ հասցնելով այն շուրջ երկու հարյուր հազար ամերիկյան դոլլարի, որով գնվեց նոր տպարանի արդիական ծանր մեքենաները, գործիքները և այլազան կազմածները Միացյալ Նահանգներից և Հայացի-գից, ինչպես նաև անձնապես հսկեց ապահով Էջմիածին առաքման դժվարին գործը:

Վանքապատկան նոր տպարանի բացման հանդիսությունը կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, ի ներկայության Ամերիկայից ժամանած պատվիրակության: Այնուհետև տպարանն աշխատեց և ցարդ աշխատում է անխափան կերպով: Ահա այստեղ է, որ 1961 թ. սկսած մինչև այսօր լույս է տեսնում Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը՝ առանց դադարի:

Մայր Աթոռ Ա. Էջմիածնի պաշտոնաթերթն այսօր բոլորեց իր հրատարակության հիսուն տարին՝ կես դար: Ցարդ ամսագրի խմբագիրները հանդիսացան վեց աշխարհիկ մարդիկ, որոնք են հետևյալները՝ 1. Առաքել Առաքելյան (1944—48 և 1955—56), 2. Լ. Կիսիբեկյան (1948—50), 3. Աշոտ Աբրահամյան (1950—55), 4. Արթուր Հատիտյան (1956—82), 5. Պարգև Ծահրազյան (1983—84), 6. Երվանդ Մելքոնյան (1985—93): Իսկ այսօր, 1994 թվականից սկսած, Վեհափառ Հայրապետի հատուկ կարգադրությամբ, այդ պատասխանատու պաշտոնի համար, առաջին անգամ լինելով, կոչված է մի հոգևորական՝ Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Մայր Աթոռի միաբանության անդամ, երիտասարդ խոստումնալից մի գրող և բանաստեղծ, որ արդեն հեղինակ է վեց գրքերի: Խանդավառ իր պատասխանատու նոր պաշտոնով, գրած խմբագրականներով և ունեցած նոր մտահղացումներով, արդեն իսկ սկզբից ցույց է տվել իր կարևոր նորամուծումը «Էջմիածին» ամսագրի կյանքում, 1994 թ. սկզբից հրատարակելով կիսամյա «Բեմ եկեղեցվո» թերթը, որպես հավելված «Էջմիածին» ամսագրի: Թերթը լավ մեկնարկ ունեցավ իր կրոնա-եկեղեցական հոդվածների բովանդակությամբ, լավ ձևավորումով, ընտիր թղթով և տպագրությամբ:

«Էջմիածին» ամսագրի հիսնամյա հոբելյանի առթիվ հարկավոր է նշել նաև Եղիշե Վարդերեսյանին, որ ոչա՛ն ոճաբան, սրբագրիչ և խմբագրի

անմիջական օգնական, խղճմտորեն մեծ ճիգ ու ջանք է թափել ամսագրի ձեռք բերած հաջողության մեջ: Իսկ ներկայիս նույն պաշտոնով նրան փոխարինող Վոլոդյա Աբրահամյանը 1966-ից սկսած ամենայն բարեխղճությամբ շարունակում է այդ պատասխանատու գործը:

«Էջմիածին» ամսագիրը մեծ նպաստ է բերել հայագիտությանը՝ հրատարակելով բազում հոգևորականների, գիտնականների և մտավորականների հարյուրավոր ուսումնասիրություններն և արժեքավոր հոդվածները, որոնք բարձր են գնահատվել լայն հասարակության կողմից:

Վեհափառ Հայրապետի քարոզները, կոնդակները և այլ բնույթի գրությունները կարդացվում են մեծ հետաքրքրությամբ և գոհունակությամբ: Հիսուն տարի շարունակ հրատարակված բազմաթիվ մտավորականների ուսումնասիրություններով և հոդվածներով զգալի կերպով մեծացել է ամսագրի ծանրակշիռ արժեքը:

Ծառ հոգևորականներ աշխատակցել են ամսագրին, օրինակ՝ Եղիշե Պատրիարք Տերտերյան, Սահակ արքեպս. Տեր-Հովհաննիսյան, Հայկազուն արքեպս. Աբրահամյան, Ծահե արքեպս. Աճեմյան, Դերենիկ եպս. Փոլատյան, Պարզե եպս. Գևորգյան, Վահան եպս. Տերյան, Նարեկ եպս. Ծաքարյան և ուրիշներ:

Մայր Աթոռի պաշտոնաթերթին աշխատակցել են մտավորականներից ակադեմիկոսներ Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, Սիրարիի Տեր-Ներսեսյանը. դոկտոր-պրոֆեսորներ Առաքել Առաքելյանը, Լևոն Սեմյոնովը, Աշոտ Աբրահամյանը, Վարազդատ Հարությունյանը, Գևորգ Աբգարյանը, Պիոն Հակոբյանը, նաև Երվանդ Ծահագիզը, Հակոբ Սիրունին, Արամ Երեմյանը, Հովսեփ Եղիազարյանը, Թորոս Թորամանյանը, Հովսեփ Գրիգորյանը և շատ ուրիշներ:

Ամսագրում հրատարակվել են նաև բազմաթիվ այլ նյութեր, որոնք մեծ արժեք ունեն նաև եկեղեցական, հայագիտական և պատմական տեսակետից, որոնցից նշենք միայն մի քանիսը.

1. Վեհափառ Հայրապետի արտաքին և ներքին Սփյուռք կատարած հովվապետական այցելությունների և զանազան ժողովների մասնակցության նկարագրականը (1956—1993 թթ.):

2. «Արարատ» ամսագրի (1868—1919) մատենագիտությունը (1968—1970 թթ.):

3. «Էջմիածին» ամսագրի (1944—1973) մատենագիտությունը (1973—1974 թթ.):

4. Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի մասին (1961 թ.):

5. Հակոբ Սիրունի—«Եղեռն մը և իր պատմությունը» (1965 թ.):

6. Ոսկան վարդապետ Երևանցու կողմից հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակի առթիվ կոնդակ և հանդիսություն (1966 թ.):

7. Հակոբ Անասյան—«Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» (1971—1972 թթ.):

8. Ս. Ներսես Ընդհալի Հայրապետի մահվան 800-ամյակի մասին (1973 թ.):

9. Արշակ Սաֆրաստյան—«Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների միևնույնության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիքները (1912—1913 թթ.)»—(1965—1966 թթ.):

10. 1915 թ. Մեծ եղեռնին նվիրված բազմաթիվ նյութեր (1965 թ.):

11. Նուբար Տեր-Միքայելյան—«Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի» (1950—1989 թթ.): Եսրունակելի:

12. Վահան Էպիսկոպոս Տերյան—«Հայոց Հայրապետների շիրիմների մասին» (1971 թ.):

13. Վիկտոր Պետրոսյանց—«Հայրենական մշակույթի պաշտպան հույկանայք» (1979—1982 թթ.):

14. Գևորգ Էպիսկոպոս Սերայդարյան—«Գավազանագիրք Վրաստանի հայոց թեմի» (1992 թ.):

15. Գառնիկ Մոեփանյան—«Երզնկայի վանքերը» (1993 թ.):

Ամսագրում կան նաև միջնադարյան մի շարք պատմիչների և գրողների՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Կորյունի, Եղիշեի, Անանիա Շիրակացու, Ս. Գրիգոր Նարեկացու, Ղևոնդ Երեցի, Ս. րիստակես Լաստիվերտցու, Ս. Ներսես Շնորհալու և ուրիշների մասին ուսումնասիրություններ:

Վերոհիշյալներից բացի ամսագրում լույս են տեսել նաև բազմաթիվ քարոզներ, ճառեր, բանաստեղծություններ, պատմական և հուշագրային հոդվածներ, նշանակումներ, մահախոսականներ, լուսանկարներ, ձեռնադրված վարդապետների և օծված Էպիսկոպոսների կենսագրականներ, Ս. Ծընընդյան և Ս. Զատիկի տոների մասին ուղարկված և ստացված շնորհավորական գրություններ, նյութեր հայագետների, հայասերների, ճարտարապետների, նկարիչների և այլ արվեստագետների մասին:

Վերջացնելով կարելի է ասել, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը մի տեսակ համայնագիտարան է, մասնագիտացված եկեղեցական, կրոնական, պատմական և հայագիտական բնույթով: Հորելյանական սույն հիսնամյակի առթիվ սրտանց մաղթենք ամսագրին հավիտենական կյանք, ինչպես հավիտենական են լինելու մեր Մայր Եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, և հայ ժողովուրդը:

ՆՈՒՐԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

